

ՀԱՆԳԻՍ

Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎՐԴ. ՄԵԼԳՈՆԵԱՆԻ

1949-2000

Հոգ. Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան, առաջանի անունով Պարոյր, ծնած է Տիբրոյր 1949 թուականին: Ծնողները՝ Պարոյր եւ Վրճինիա Մելգոնեան:

Հայր Մուրրը իր նախնական եւ երկրորդական կրթութիւնը ստացած է իր ծննդավայրին մէջ, ապա ընդունուած է համալսարան եւ 1972-ին Wayne State University-էն ստացած Պսակատր Արտեստից տիտղոսը՝ Աշխարհագրութեան եւ Պատմութեան ճիւղերուն մէջ: 1974-ին ստացած է Մագիստրոսի տիտղոսը՝ Ուսուցչութեան ճիւղին մէջ՝ իր մասնագիտութիւնը ըլլալով խորհրդատուութիւն եւ Լեզուաբանութիւն:

Հայր Հայկազուն Տիբրոյրի ազգային-եկեղեցական կեանքին մասնակցած է իր պատանեկութեան տարիներէն սկսեալ: Ութ տարի եղած է ուսուցիչ Տիբրոյրի Կիրակնօրեայ Վարժարանին, չորս տարի՝ նոյն քաղաքի Հայկական Դպրոցին: Տասնըչորս տարի պաշտօնավարած է Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան տեղական վարչութեան մէջ, շրջան մը վարելով ատենապետի պաշտօնը, անդամակցած է նաեւ նոյն Կազմակերպութեան Կեդրոնական Վարչութեան:

1969-1970 թուականներուն եղած է Ս. Էջմիածնի Հոգեւոր Դեմարանի ուսանող:

1974 թուականի աշնան ընդունուած է Երոսաղէմի Ժառանգատրաց Վարժարանը եւ Ընծայարանը՝ մասնագիտանալու հայագիտական ճիւղերուն մէջ: Երկու տարի պաշտօնավարած է իբրեւ ուսուցիչ աշխարհագրութեան եւ Անգլերէն լեզուի: Պատրաստած է աշխարհագրութեան երկեզուեան դասագիրք մը, ինչպէս նաեւ Ամերիկահայ եկեղեցիներու մէջ մոնակալներու գործածութեան համար երկեզուեան գիրք մը:

1976 թուականի Յունիս 13-ին՝ ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: 1978-ին ստացած է Վարդապետութեան աստիճան:

Հայր Հայկազուն Միացեալ Նահանգներ վերադարձած է 1978 թուականին եւ նշանակուած հովիւ Հէյվըրհիլ Մասսաչուսէցի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ:

1984 թուականին՝ օրուան Առաջնորդ եւ այժմու Երոսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան զինք նշանակած է հովիւ Զելթընհամ Փէնսիլվէնիոյ Ս. Երբորդութիւն Եկեղեցւոյ:

1991 թուականին՝ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի ձեռնաք ստացած է Ծայրագոյն Վարդապետի աստիճաններ:

1999 թուականի Յունուար ամիսէն սկսեալ, Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի կարգադրութեամբ, ստանձնած էր Պէյսայտ Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւի պաշտօնը:

Հայր Հայկազուն պատրաստած է զանազան գիրքեր դպիրներու, ծիսակատարութեանց եւ աղօթքներու մասին, Հայ Եկեղեցւոյ բառարան մը, ինչպէս նաեւ քարգմանած եւ խմբագրած է Հայ Եկեղեցւոյ Մուրքք եւ Տօները:

Հանգուցեալ Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան անդամ էր Արեւելեան Թեմի Թեմական Խորհուրդին:

Մայիս 9, 2000

digitised by

A.R.A.R.@